

Նոր ուսանողներ Հունաստանից և Հոլանդիայից

Ձոի Իոսիֆիդուն, Մարինա Միրզաբեկյանը և Բեատե Յանսենը այս կիսամյակին Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում տնտեսագիտության, մարկետինգի և կառավարման դասընթացներ կանցնեն: Մարինան և Ձոին Հունաստանից են, իսկ Բեատեն՝ Հոլանդիայից: Նրանք ՀՊԱՀ-ն նախընտրել են եվրոպական էրասմուս Մունդուս փոխանակման ծրագրում ընդգրկված Հարավային Կովկասի այլ համալսարաններից: Կիսամյակի ավարտին եռյակը ավարտական քննություններ կհանձնի ընտրված 6 առարկաներից:



Zoi Iosifidou (left), Marina Mirzabekyan, and Beate Janssen will be taking economics, marketing and management classes at the Agribusiness Teaching Center this semester. Marina and Zoi are from Greece, and Beate is from the Netherlands. They chose the Armenian State Agrarian University among other universities of the South Caucasus included in the European Erasmus Mundus student exchange program. They will be taking final exams in the selected six courses at the end of the semester.

ԱՌԿ-ի շրջանավարտը դասախոսություն է կարդում Մոսկվայում

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի 2003թ. շրջանավարտ Լիանա Աբաջյանը հրավիրվել էր դասախոսություն կարդալու Մոսկվայի «Ռուս-ամերիկյան արտասահմանյան ուսուցում (ՌԱԱՈ)» ծրագրի ուսանողների համար. Օր. Աբաջյանին հրավիրել էր ԱՌԿ-ի իր երբեմնի դասախոս Վերն Հաուզը, որը նշված ծրագրում գյուղատնտեսական մարկետինգ է դասավանդում: Լիանան ԱՌԿ-ի լավագույն շրջանավարտներից է, այժմ փոխտնօրեն է Մոսկվայի ակնեղենի գործարաններից մեկում:



Դոկտ. Հաուզից իմացանք, որ դասախոսության ընթացքում Լիանան մանրամասնորեն ներկայացրել է էլեկտրոնային կոմերցիայի ոլորտում գործարար ծրագիր

գրելու սկզբունքներն ու եղանակները: Դասախոսությունից հետո ուսանողները նրան երկար պահեցին, քանի որ բազմաթիվ հարցեր ունեին թե դասախոսության թեմայի և թե կրթության ու մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ: Լիանայի դասախոսության մեջ արտացոլվեցին ժամանակին ԱՌԿ-ում դոկտ. Հաուզի տված դասերի նյութեր: «Սակայն առավել կարևորն այն է, որ նա ռուս ուսանողներին խրախուսեց շարունակել ուսումը, ժամանակակից կրթություն ստանալ» - ասաց դոկտ. Հաուզը: Իրենց հերթին, ուսանողներին նույնպես հետաքրքրում էր այն հարցը, թե «ինչպես կարող են գտնել իմ տեղը կյանքում»՝ ինչպես արտահայտվեց նրանցից մեկը:

Լիանան սեփական օրինակով ցույց տվեց, թե ինչպես է ինքը ակնեղենի բիզնեսի ոլորտում մարկետինգային տեսությունը զուգահեռաբար կիրառում ռազմավարական գործելակերպի հետ: Նա խոսեց նաև այն մասին, թե ինչպես կարելի է նույն տեսությունն ու գործելակերպը կիրառել, օրինակ, կաթի և այլ ապրանքների արտադրության և իրացման բնագավառում: «Բիզնեսը մնում է բիզնես, - ասաց նա, - տնտեսությունն էլ՝ տնտեսություն»: Նաև խոսեց ԱԳՁԿ-ում և այլուր իր ձեռք բերած աշխատանքային փորձի մասին:

ՌԱԱՈ ծրագրում սովորում են 10 ռուս ուսանողներ, ևս 6-ը՝ ԱՄՆ տարբեր համալսարաններից են: Դասընթացներն անցկացվում են Մոսկվայի պետական գյուղատնտեսական համալսարանում: Դասախոսական կազմի համալրման հարցում համալսարանի հետ գործակցում է ACIDI/VOCA-ն: ○

New Students from Greece and the Netherlands

ATC Graduate Lecturing in Moscow

Liana Abajyan, Class of 2003, gave a guest lecture for the Russian American Study Abroad (RASA) program in Moscow, Russia. Ms. Abajyan was invited by Dr. Verne House who teaches agricultural marketing within the RASA program. Dr. House used to teach at the ATC for several years. Liana is one of the best ATC graduates, now the Deputy Director of a jewelry plant in Moscow.

Dr. House said Liana presented a detailed business plan for e-commerce. Students kept her after her lecture asking many questions both about the topic and about her education and profession. Her lecture illustrated many of Dr. House's lessons. "More importantly, she encouraged the Russian students to pursue a modern education," Dr. House said. They, too, wanted to know "how I can find my place" as one student expressed it.

Liana demonstrated how she applies marketing theory and strategic management practices to market jewelry. She also talked about how the same theories and practices apply to milk or other commodities. "Business is business," she said "economics is economics." She told what she learned from her jobs with CARD here in Armenia and other businesses.

This RASA class includes 10 Russian students and six from U.S. universities. Courses are taught at Moscow State Agricultural University. ACIDI/VOCA cooperates to staff teaching.



ԱՅԿԱՄ-Ը ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՄՈՒՆԻՏԵՏՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆԸ

ԱՅԿԱՄ հիմնադրամի Ագրոբիզնեսի հետազոտական խմբում ստեղծվել է գենդերային հետազոտական ենթախումբ, որը ձեռնարկել է Հայաստանի գյուղական վայրերում գենդերային անհավասարությանն առնչվող հարցերում կանանց ընդգրկվածությանն ուղղված ուսումնասիրություն: Ըստ խմբի ղեկավար Նունե Հարությունյանի, 2007թ. ԱՅԿԱՄ-ի և Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայի (ԳԱՖ) իրականացրած «ԳԱՖ-ում կանանց մասնակցության պատճառային վերլուծությունը» վերտառությամբ փորձնական ուսումնասիրությունն ի հայտ բերեց մի շարք լուրջ խոչընդոտներ, որոնք խանգարում են գյուղաբնակ կանանց՝ ֆերմերային կազմակերպությունների, գյուղական համայնքների և որոշում կայացնող կառույցների գործունեության մեջ ընդգրկվածությանը: «Համայնքների կյանքին կանանց մասնակցության բացակայությունը և մեկուսացումը պայմանավորված են իրենց իրավունքների, գենդերային իրավահավասարության սկզբունքների վերաբերյալ անիրազեկությամբ, առաջնորդին ներհատուկ հմտությունների բացակայությամբ, - ասաց տիկին Հարությունյանը, - Ջուզակցվելով գործազրկության, աղքատության և ֆինանսական կախվածության հետ, այն սահմանափակում է նրանց հնարավորությունները՝ իրենց անձնական զարգացման, հասարակության մեջ իրենց դերի բարձրացման առումով»:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ԳԱՖ-ը և ԱՅԿԱՄ-ը նախատեսել և իրականացնում են «Գյուղաբնակ կանանց հզորացումը Հայաստանում» ծրագիրը, որը նպատակ է հետապնդում աջակցելու նշված դժվարությունները հաղթահարելու հարցում և զարգացնելու կանանց կարողությունները՝ կապված գենդերային խնդիրների լուծման և առհասարակ համայնքներում կանանց դերի բարձրացման հետ: Ծրագիրն իրականացվում է Արարատում, Արմավիրում, Վայոց Ձորում և Երևանում: Ծրագրի հիմնական խնդիրներն են ֆերմերային կազմակերպությունների գործունեության ոլորտում կանանց մասնակցության ակտիվացումը և կանանց նախաձեռնող խմբերի ստեղծման գործում աջակցությունը, որոնց նպատակն է որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության ապահովումն ու կանանց շրջանում ձեռներեցության զարգացումը:

ԱՅԿԱՄ գենդերային հետազոտական խումբը վերոնշյալ խնդիրների լուծմանը նպաստում է գենդերային իրազեկության բարձրացմանն ու առաջնորդության հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցողական դասընթացների միջոցով, որոնց մասնակցում են թե կանայք և թե տղամարդիկ: ○

Promoting Equal Rights within the Rural Communities

ICARE has established a new Gender Research Team within its Agribusiness Research Group, and undertook a new assessment study targeting women's inclusion and gender inequality issues in rural Armenia. According to Nune Harutyunyan, the Team Leader, the pilot study entitled "Causality Analysis of Women's Participation in FAA" and implemented in Summer/Fall 2007 by ICARE and Federation of Agricultural Associations of Armenia (FAA) revealed a number of serious obstacles hindering inclusion of rural women within the farmer organizations, rural community and decision making structures. "Women's non-participation and isolation from community life is caused by the

low level of awareness on their rights, principles of gender equality, lack of leadership skills," Ms. Harutyunyan said, "And, coupled with unemployment, poverty and financial dependency, it restricts their opportunities for development and empowerment within the society."

Based on the study findings, FAA and ICARE have envisioned and are currently implementing the first phase of the pilot project "Empowerment of Rural Women in Armenia" aimed to help rural communities overcome these obstacles and enhance

women's capacities in terms of gender, and raising their roles in the local communities at large. The project is carried out in Ararat, Armavir, Vayots Dzor and Yerevan. The basic objectives the Project pursues are strengthening of rural women's participation within farmer's organizations and supporting to establishment of Women Initiative Groups aimed at increasing rural women's participation in decision-making processes and development of women's entrepreneurship.



The ICARE gender team promotes creation of enabling conditions for implementation of the above objectives by provision of gender awareness and leadership trainings targeting both women and men. ○

Մեր հյուրն էր Ագրոլիզինգի մարկետինգի կառավարիչը



Քրիստինե Բեգլարյան
ԱՌԿ 5

Գարնանային կիսամյակի առաջին ուրբաթօրյա սեմինարներից մեկը վերաբերում էր գյուղատնտեսական լիզինգին: Լիզինգի՝ որպես ֆինանսական գործիքի, մասին իմ դասընկերները աղոտ պատկերացում ունեին: Ինչ վերաբերում է ինձ, բախտ է վիճակվել 2007թ. իմ ամառային պրակտիկան անցկացնել հենց Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպությունում: Փետրվարի 15-ի մեր հրավիրյալ դասախոսը այդ կազմակերպության մարկետինգի գծով կառավարիչ Արամ Մխիթարյանն էր:

Ես վստահ էի, որ թեման հետաքրքրելու է ուսանողներին և պրն Մխիթարյանին «գոուշացրել» էի հարցերի առատության մասին, որին ինքն, իսկապես, չէր սպասում:



Սակայն նա գիտեր բոլոր հարցերի պատասխանները: Բուն դասախոսությունը խիստ ճանաչողական ու բազմակողմանի էր: Արամը նախ բացատրեց գյուղատնտեսության և ագրոբիզ-

նեսի ոլորտում լիզինգ (ֆինանսական վարձակալություն) հասկացության էությունն առհասարակ և մասնավորապես դրա կիրառումը Հայաստանում: Այնուհետև նա խոսեց Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ-ի, ընկերության աշխատանքի հիմնական սկզբունքների, մոտեցումների և պայմանների, մրցակիցների և գործակիցների մասին:

Ըստ իմ համակուրսեցիների, այս տեղեկատվությունն արժեք լսել: Երբ ԱՌԿ-ի ուսանողներն ասում են՝ արժե լսել, դա նշանակում է, որ ամեն ինչ գրեթե կատարյալ է:

Այժմ, մի քանի խոսք այն ընկերության մասին, որ մեզ այդքան դուր է եկել: Ագրոլիզինգ ԼՎԿ ՍՊԸ-ն հիմնադրվել է 1999թ. ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի Մարկետինգի աջակցության ծրագրի ֆինանսատեսխնկական աջակցությամբ: Այդ ժամանակից ի վեր ընկերությունը կարևորագույն դեր է խաղացել երկրի ամբողջ տարածքում ագրոբիզնեսի տասնյակ ներկայացուցիչների լիզինգային, իսկ սկսած 2004թ.-ից՝ նաև վարկային, ծառայությունների մատուցման գործում: Մի քանի տարի Հայաստանում առաջին լիզինգային կազմակերպությունը նաև միակն էր, իսկ այսօր այդ ոլորտում եղած երկու կազմակերպություններից մեկն է: Ագրոլիզինգը տարբեր երկրներից ձեռք է բերում ժամանակակից արտադրական հոսքագծեր, սառնարան ավտոմեքենաներ, կաթի հավաքման տարողություններ և այլ մեքենասարքավորումներ և լիզինգային հիմունքներով տրամադրում վերամշակող ձեռնարկություններին, ֆերմերային տնտեսություններին ու գյուղացիական կոոպերատիվներին: Գործունեության 8 տարիների ընթացքում Ագրոլիզինգն արժանացել է իր հաճախորդների վստահությանն ու հուսալի գործընկերոջ համբավ վաստակել: Ագրոլիզինգի առաջին հաճախորդներից ոմանք այսօր էլ հաճույքով շարունակում են աշխատել ընկերության հետ: ○

We Hosted the Marketing Manager of AgroLeasing

By Christine Beglaryan
ATC 5

One of the first Friday seminars in the spring semester was about agricultural leasing. As a financial tool, leasing was barely familiar to my fellow students. As to myself, I had the lucky opportunity to have my 2007 summer internship at AgroLeasing Leasing-Credit Company. Our guest lecturer on February 15 was Aram Mkhitarian, the Marketing manager of AgroLeasing.

I knew the topic was going to interest the students and I 'warned' Mr. Mkhitarian about the abundance of questions that he did not expect. However, he knew the answers to all questions. The presentation itself was very informative and comprehensive. Aram first explained the idea and the concept of leasing in agriculture and agribusiness overall and in Armenia in particular. Then he spoke about AgroLeasing LCC LLC, the basic principles, approaches, and conditions of their work, their clients and cooperators.

According to my fellow ATC students, this information was worth listening. When ATC students say it's worth listening, it means we are dealing with something almost perfect.

Now, a few more words about the company that we liked so much. AgroLeasing LCC LLC was established in 1999, through financial and technical support from the USDA Marketing Assistance Project. Since that time, the company has been playing a critical role in providing leasing and – starting from 2004 – also crediting services to dozens of different agribusinesses throughout Armenia. For several years, this company was the only leasing company in Armenia. Now it is one of the only two. AgroLeasing has provided production lines, trucks, milk collection tanks, and other equipment to agribusinesses and farms on lease terms. During these 8 years, AgroLeasing has created trust and reliability among its clients; some of the first clients are still working with AgroLeasing.



Հոտազոտություններ՝ կայուն զարգացման նպատակով

ԱՅԿԱԿ հիմնադրամի հետազոտական խմբի կողմից ներկայումս իրականացվող հիմնական ծրագրերից մեկը կոչվում է «Գյուղատնտեսական արտադրանքի կայունությունը Հայաստանում – ընթացիկ իրավիճակի վերլուծություն և բարելավումներ ֆերմերներին տրամադրվող խորհրդատվությանն ու քաղաքականությանն ուղղված գործողությունների իրականացման մեջ՝ RISE («Կայունության արդյունաբար գնահատում») մոդելի կիրառման համապատասխան շրջանակի որդեգրման նպատակով»: Գնահատման այս մոդելը բացարձակապես նոր մոտեցում է հայաստանյան ֆերմերային տնտեսությունների կայուն զարգացման մակարդակի գնահատման ոլորտում, մոտեցում, որն առաջարկել է Շվեյցարիայի գյուղատնտեսական քոլեջը, որը և այն իրականացնում է ԱՅԿԱԿ հիմնադրամի հետ միասին:

Ծրագրի ընդհանուր նպատակի, այն է՝ Հայաստանում գյուղատնտեսական արտադրության կայունության բարելավման, շրջանակում հիմնական խնդիրն է գնահատման RISE մոդելի միջոցով բացահայտել երկրում գյուղատնտեսական արտադրության կայունության ուժեղ և թույլ կողմերը և բարելավել ոլորտում տիրող իրավիճակը՝ ֆերմերներին տրամադրվող անմիջական խորհրդատվության, ինչպես և կայուն գյուղարտադրությանը նպաստող պայմանների շրջանակի ստեղծման վերաբերյալ որոշումներ ընդունելու համար պատշաճ հիմք ստեղծելու միջոցով:

2007թ. մենք իրականացրինք ոչ մեծաթիվ ֆերմերային տնտեսությունների նախնական ուսումնասիրություն, իսկ սկսած այս փետրվարից, իրականացնում ենք լայնամասշտաբ գնահատումներ Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի 200 տնտեսություններում: Փետրվար ամսվա ընթացքում ԱՅԿԱԿ հետազոտական խմբի մշտական այցելությունների և ֆերմերների շրջանում անցկացված հարցումների միջոցով գնահատվել է գրեթե հարյուր տնտեսությունների կայունության մակարդակը, հիմնականում՝ Արմավիրի և Արագածոտնի մարզերում:

Ֆերմերների արծագանքը խիստ դրական է. նրանք պատրաստակամ են մասնակցել ծրագրին. սա խոսում է ծրագրի հրատապության մասին:

Թեև առանձին մարզերի մասշտաբով բուն գնահատումը տեղի կունենա հարցումներից հետո, սակայն արդեն այժմ որոշ ֆերմերներ խնդրում են տեղեկություններ տալ իրենց տնտեսությունների կայունության մակարդակի վերաբերյալ:

Ծրագիրը և դրանից ելնող խորհրդատվական աշխատանքը կարևոր ազդեցություն կունենան տնտեսությունների կայուն զարգացման և առհասարակ երկրի գյուղական շրջանների զարգացման վրա: ○

Studies for Sustainable Development of Farms and Rural Areas

One of the major research projects that the ICARE Agribusiness Research Group is currently undertaking is titled as “Sustainability of Agricultural Production in Armenia – analysis of the current situation and improvements through farm advice and facilitation of policy action to adapt framework conditions using the RISE (Response Inducing Sustainability Evaluation)”. The RISE is an absolutely new approach in sustainability assessment at farm level,



which was developed by Swiss College of Agriculture. The research project is being jointly implemented in Armenia since 2006 by the ICARE and Swiss College of Agriculture with the support of Swiss National Scientific Foundation.

Within the framework of the overall goal of the project,

which is to improve the sustainability of agricultural production in Armenia, the objective is to identify potentials strengths and weaknesses of the sustainability of agricultural production in Armenia through extensive RISE assessments, and improve the situation through direct advice at farm level and by providing a sound basis for decision-making towards framework conditions fostering sustainable production in Armenian agriculture.

The preliminary evaluation of small number of farms was implemented during 2007 and starting from this February the large scale assessment in four regions of Armenia started, which will include evaluation of about



200 farms in Armavir, Aragatsotn, Gegharquniq, and Shirak regions. During February regular visits and surveys conducted by the ICARE experts enabled to evaluate almost one hundred farms, mainly in Armavir and Aragatsotn regions.

The feedback received from farmers

is very positive. They find that RISE is a useful monitoring and assessment tool and shows the holistic picture of their farms.

The research findings and the complementary advising will definitely have an important impact on the sustainable agricultural development of the studied regions and will contribute to the overall rural development and agricultural policy making in Armenia.

Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation
74 Teryan St., Yerevan, Armenia
In association with USDA FAS, Texas A&M University, and the Armenian State Agrarian University
Tel: (37410) 52-28-39, 56-96-70;
Fax: (37410) 56-62-21 E-mail: info@icare.am
www.icare.am/atc
Հ. ԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԱՐ ԱԳՆԱԿԱՏՈՒՄ